Էնկիւրի·
36—8—7·

Երևան· Հայաստանի Հանրապետութեան
Արտաքին Գործերի Նախարարութեան·

Պատիւ ունեմ պատասխանել ձեր 30 յունիս գրութեան, որով պատասխանում էր իմ 24—6—36 գրութեան:

Հակառակ Արևելեան բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշայի և մեր կողմից արած ազդարարութեան՝ կասեցնել Օլթիի շրջանում ո՛չ մի օրինաւոր հիմունքով արած յարձակումները և յետ կանչել իրենց տեղերը ձեր զօրամասերը, յիշեալ մասերը դեռ չեն պարպուած և նոյնիսկ 2 յուլիսի 36 թ· նորից մի յարձակում է տեղի ունեցել:

Թէ Ձեր և թէ Ձեր զօրքերի հրամանատարի պատասխանների մէջ տեղի ունեցած յարձակումները չհերքելով հանդերձ՝ ասում է, որ շարժումները տեղի են ունեցել մուսուլման ազգաբնակութեան խնդրանօք, և որ այդ ազգաբնակութեան դէմ ո՛չ մի բռնութիւն ու հալածանք գործ չի դրուել, որ օսմանեան սահմանի դէմ ո՛չ մի յարձակում չի եղել, որով գոյութիւն ունեցող յարաբերութիւնները չեն խանգարուել: Ինչպէս Ձեզ էլ անծանօթ չէ, երկու կառավարութեան միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւնների հիմք են ծառայում Հայկական Հանրապետութեան պաշտօնապէս ճանաչած Բրէստ–Լիտովսկի դաշնագիրը և նրա լրացուցիչ՝ Բաթումի դաշնագիրը, որը լիազօրութիւն ունեցող պատուիրակների կողմից ստորագրուած, երկու կառավարութեան կողմից ընդունուած և հաստատուած է:

Օլթիի շրջանն ևս յիշեալ դաշնագրի տրամադրութիւններով հաստատուած երեք նահանգների մէջ լինելով՝ համաձայն ժողովրդի ազատ կերպով կատարուած հանրաքուէին՝ օսմանեան պետութեան բացարձակ ստացուածքն է կազմում:

Յիշեալ շրջաններում որևէ պատճառով օսմանեան պաշտօնեաների կամ զինուորական ուժերի ժամանակաւորապէս չգտնուելը օսմանեան իշխանութեան այն տեղերից ո՛չ փաստօրէն և ո՛չ էլ իրաւականօրէն վերացնելու պատճառ չի կարող լինել:

Այն ժամանակ, երբ սպասում էր իրաւունքի և արդարութեան սկզբունքների համաձայն և խաղաղ կերպով լուծել Բաթումի դաշնագրի ամբողջական տրամադրութիւնից ծագող վէճերը, եթէ այդպիսիներ կան — հայկական զօրամասերի կողմից Օլթիի շրջանի վրա կատարուած յարձակումները մեր կողմից շարունակութիւնը ցանկալի եղող բարեկամական և հարևանական յարաբերութիւնների՝ բացէ ի բաց խանգարում են և միաժամանակ մեր բացարձակ իրաւունքի դէմ ոտնձգութիւն են արում:

Ինչ վերաբերում է Օլթիի մուսուլման ազգաբնակութեան հրաւէրին և պահանջին, այդ էլ կատարուած յարձակումն օրինականացնելու համար արդարացի մի փաստ չէ· եթէ նոյնիսկ ընդունուի, որ յիշեալ ազգաբնակութիւնը այդպիսի մի դիմում կատարած է, այն ժամանակ այդ դիմումը նրա վրա յանցանքի մշտական պատասխանատուութիւնը կը հրաւիրէ:

Ինչպէս որ առաջին գրութեամբ էլ յայտնել եմ, մեր կառավարութիւնը և թիւրք ազգը հայ կառավարութեան և հայ ժողովրդին թշնամի չեն եւ ցանկանում են գտնել մի կայ փոխադարձ շահերը ապահովելու համար: Եթէ իմ տեսակէտները Հայաստանի կառավարութեան կողմից անկողմնակալ և շրջահայեաց կերպով քննուեն, կը յուսամ, որ իմ յայտնած դիտողութիւնների անկեղծութեան և իմ ազգի ձեր ազգի հանդէպ ունեցած բարեկամական զգացմունքներին հաւատ պիտի ընծայի: